Արձանագրություն

«ՏՐԱՆՍՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՓԲԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Վաղարշապատ բնակավայրում Վ. Ռշտունու անվան թիվ 11 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսման

Վաղարշապատ բնակավայր

07/07/2025թ.

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի՝ 2025թ. հուլիսի 07-ին՝ ժամը 11:00-ին Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանում տեղի ունեցավ «ՏՐԱՆՍՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՓԲԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Վաղարշապատ բնակավայրում Վ. Ռշտունու անվան թիվ 11 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Հանրային լսմանը մասնակցում էին.

Ս. Կիզիրյան «ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի մասնագետ

Ա. Բաղդասարյան «ՏՐԱՆՍՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՓԲԸ

Ա. Գաբրիելյան ՀՏԶՀ-ի ներկայացուցիչ, բնապահպան

Մ. Վարդանյան «ԷԿՈՆՈՄ ԷԿՈ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Կ. Հովեյան «Արխի-տուր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Համայնքապետարանի աշխատակիցներ և այլն:

Բացման խոսքով հանդես եկավ «ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի մասնագետը, նշեց, որ փորձաքննության է ներկայացվել «ՏՐԱՆՍՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՓԲԸ-ի կողմից՝ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Վաղարշապատ բնակավայրում Վ. Ռշտունու անվան թիվ 11 հիմնական դպրոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը: Նախատեսվող գործունեությունն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

Նշեց, որ կատարվել են համապատասխան ծանուցումներ, գործունեության վերաբերյալ իրենց կարծիքներն են հայտնել մի շարք նախարարություններ, շրջակա միջավայրի նախարարության մասնագիտական ստորաբաժանումները և փորձաքննական կենտրոնը, որոնց կարծիքների, առաջարկությունների և դիտողությունների հիման վրա հաշվետվությունը լրամշակվել է:

Հանրային քննարկման ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում հանրությունը կարող է իր կարծիքը, դիտողությունը կամ առաջարկությունը գրավոր կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացնել Շրջակա միջավայրի նախարարություն:

Մասնագետը նշեց, որ գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված՝ Կալախոտ կասպիական (Kalidium caspicum) տեսակի հայտնաբերման դեպքում՝ պետք է առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներով:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության նպատակն է բացահայտել, վերլուծել ու գնահատել բնապահպանական ազդեցությունները, որոնք կապված կլինեն փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների, փոշու արտանետումների հետ՝ հիմքերի փորման, շինարարության փուլում, վառելիքի արտանետումներ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ, շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները, և այլ գործոններ:

Թվարկված աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները կանխարգելելու, չեզոքացնելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են հաշվետվության մեջ:

Ճարտարապետը ներկայացրեց դպրոցի տեխնիկատնտեսական ցուցանիշները, նախագիծը, հարկայնությունը, կառուցվածքը, նշեց, որ առկա են լինելու դասարաններ, շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատման համար տնկվելու են նոր ծառեր: Դպրոցը հարմարեցված է լինելու շարժունակության խանգարումներ ունեցող երեխաների համար, կլինեն թեքահարթակներ, վերելակ և այլն: Շինարարության ավարտից հետո տարածքը բարեկարգվելու և կանաչապատվելու է, նախատեսված է նաև ֆոտովոլտային արևային վահանակներ:

ՀՏՋՀ-ի ներկայացուցիչը ներկայացրեց, որ նախատեսվող գործունեությունն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից: Նշեց, որ շինաշխատանքների ժամանակ հետևողական կլինեն կատարվելիք աշխատանքներին, իսկ ազդեցությունները, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել շրջակա միջավայրի վրա, կկրեն ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում իրականացնելու են մշտադիտարկումներ համապատասխան մասնագետների կողմից, կհետևեն, որպեսզի բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա հնարավորինս քիչ լինեն, իսկ առկայության դեպքում կիրականացնեն մեղմացնող միջոցառումներ՝ տարածքի ջրցանում, շինհրապարակից դուրս գալիս մեքենաների անիվների մաքուր վիճակ, շինաշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել:

Հարցեր հնչեցին ջեռուցման, արևային վահանակների, հին դպրոցի քանդման, դպրոցի շրջակա տարածքի, հարակից ճանապարհների վերաբերյալ, ծառահատման, կանաչապատման համար նախատեսված ծառատեսակների, որոնց նախաձեռնող կազմակերպության ներկայացուցիչը, ճարտարապետը տվեցին պատասխաններ, համաձայն որի ջեռուցման համար նախատեսված է կաթսայատուն, արևային վահանակներ նախատեսվում է դնել դպրոցի տանիքին, հին դպրոցը կքանդվի, այնուհետև կկառուցվի նորը, տարածքում գտնվում են 10 ծառեր, որոնք չեն հատվելու, և նաև իրականացվելու է դպրոցի կառուցումից հետո տարածքի կանաչապատում և նոր ծառերի տնկում: Այլ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին: Ամփոփելով լսումների արդյունքները, մասնակիցների կողմից գործունեությունն արժանացավ հավանության: